

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

Գոստա Հեքանսոնի և Սունե Ստյուրենսոնի՝
ընդդեմ Շվեդիայի թիվ 11855/85 գանգատի

ընդունելիության վերաբերյալ

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը, 1987թ. հուլիսի 15-ի դռնփակ խորհրդակցությունից հետո, հետևյալ անդամների ներկայությամբ՝ պարոնայք Կ. Ա. Նորգարդ, Նախագահ, Զ. Ա. Ֆրովեյն, Ֆ. Էրմակորա, Է. Բասատիլ, Ժ.-Կ. Սոյեր, Հ. Գ. Շերմերս, Հ. Դանելիուս, Գ. Բաթլիներ, Հ. Վանդենբերգ, տկն. Գ.Հ.Թյուն, սըր Բասիլ Հոլ, պրն Կ. Լ. Ռոզակիս, տկն Ժ. Լիդի, պրն Հ. Կ. Կոյուզեր, Հանձնաժողովի քարտուղար,

Հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 25-րդ հոդվածի վրա,

Հիմնվելով Գոստա Հեքանսոնի և Սունե Ստյուրենսոնի կողմից 1984թ. ապրիլի 3-ին Շվեդիայի դեմ ներկայացված և 1985թ. նոյեմբերի 15-ին որպես թիվ 11855/85 գործ գրանցված գանգատի վրա,

Հիմնվելով.

- Հանձնաժողովի կանոնակարգի 40-րդ կանոնով նախատեսված առաջին զեկույցի վրա,
- Կառավարության 1986թ. օգոստոսի 21-ի և դիմողների 1986թ. հոկտեմբերի 2-ին

ներկայացված բացատրությունների վրա,

- Հանձնաժողովի կանոնակարգի 40-րդ կանոնով նախատեսված երկրորդ զեկույցի վրա,

-1987թ. հուլիսի 15-ին միստի ժամանակ կողմերի ներկայացրած բացատրությունների վրա,

Խորհրդակցելով՝
Ընդունում է հետևյալ որոշումը

ՓԱՍՏԵՐԸ

Գործի փաստերը կարող են ընդհանրացվել հետևյալ կերպ.

Գործի առանձին հանգամանքները

Դիմողներն են 1926թ. ծնված պրն Գոստա Յեքանսոնը՝ Յոորի բնակիչ, մասնագիտությամբ՝ ոստիկան, և 1931թ. ծնված պրն Սունե Ստուրենսոնը՝ Աքանես Ֆագերհալթի բնակիչ, մասնագիտությամբ՝ ագարակապան, երկու դիմողներն էլ Շվեդիայի քաղաքացիներ են: Հանձնաժողովում նրանց ներկայացնում էր պրն Ռովան Ռավնսբորգը՝ Լյուդի համալսարանի իրավունքի դասախոս:

1979թ. դեկտեմբերի 4-ին Մարկարիդի քաղաքապետարանում տեղի ունեցած հրապարակային աճուրդում 240.000 SEK-ով գնել են Ռիսբոկե 1:3 կոչվող՝ գյուղատնտեսական նշանակության կալվածքը: Աճուրդից առաջ կատարված գնահատման համաձայն՝ գույքի արժեքը եղել է 140.000 SEK: Աճուրդը ձեռք է բերել իրավաբանական ուժ:

1980թ. հունվարի 7-ին Քրոնոբերգի տեղական Վարչական խորհուրդը տվել է գնումը հավաստող փաստաթուղթ: Այդ փաստաթղթով դիմողները զգուշացվել են, որ Հողատարածքների ձեռքբերման մասին օրենքի 16-րդ բաժնի 1-ին կետի համաձայն՝ եթե հողատարածքը ձեռք է բերվել հրապարակային աճուրդում՝ այնպիսի հանգամանքներում, երբ այն գնվել է գնորդի կողմից կամավոր և պահանջվում է հողատարածքը ձեռք բերելու վերաբերյալ թույլտվություն, այդ հողատարածքը պետք է վաճառվի աճուրդն ուժի մեջ մտնելու պահից սկսած երկու տարվա ընթացքում, եթե գնորդը չի ստացել այդ հողատարածքը պահելու թույլտվություն, և եթե այդ հողատարածքը չի վաճառվում նշված ժամկետում, տեղական Վարչական խորհուրդը, տեղական Գյուղատնտեսական խորհրդի պահանջով, կարգադրում է վաճառել այդ հողատարածքը հրապարակային աճուրդում՝ համաձայն նշված օրենքի 17-րդ բաժնի:

1980թ. հունվարի 7-ին դիմողները, Հողատարածքների ձեռքբերման մասին օրենքի համաձայն, դիմել են Քրոնոբերգի տեղական Գյուղատնտեսական խորհուրդ՝ Ռիսբոկե 1:3 կալվածքը պահելու թույլտվության խնդրանքով:

Տեղական Գյուղատնտեսական խորհրդի հարցմանն ի պատասխան՝ դիմողները 1980թ. փետրվարի 5-ի նամակով տեղեկացվել են, որ կալվածքը, ելնելով դրա չափերից, տեղադրությունից և բնույթից, պետք է համարվի «ռացիոնալիզացման» միավոր, որը պետք է օգտագործվի այդ տարածքում կալվածքներն ամրացնելու համար, որը կարող է հետագա զարգացում ունենալ: Խորհուրդը նշել է, որ հարևանները հետաքրքրված են այդ կալվածքը ձեռք բերելու հարցում և թույլտվության խնդրանքը կարող է մերժվել Հողատարածքների ձեռքբերման մասին օրենքի 4-րդ բաժնի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա: Բացի դրանից, Խորհուրդը նշել է, որ հիմքեր կան ենթադրելու, որ Խորհուրդը այդ կալվածքի արժեքը կգտնի չափազանց բարձր՝ հետ գնելու համար: Դիմողներին հնարավորություն է տրվել ներկայացնել Խորհրդի նամակի կապակցությամբ իրենց մեկնաբանությունները:

1980թ. փետրվարի 15-ին տեղական Գյուղատնտեսական խորհուրդը որոշել է մերժել դիմողների՝ կալվածքը պահելու թույլտվության խնդրանքը, քանի որ այն համարվել է ռացիոնալիզացման նպատակներով կարևոր, և որ այն պետք է օգտագործվի այդ տարածքում կալվածքներն ամրացնելու համար, որը կարող է հետագա զարգացում ունենալ:

Դիմողները բողոքարկել են Գյուղատնտեսության ազգային խորհուրդ, որը 1980թ. սեպտեմբերի 5-ի որոշմամբ մերժել է բողոքը՝ նշելով, *inter alia*.

«Ինչպես տեղական Գյուղատնտեսական խորհուրդը, այնպես էլ Գյուղատնտեսության ազգային խորհուրդը, գտնում է, որ տվյալ կալվածքը որպես առևտրային տարածք պահպանվելու համար անհրաժեշտ նախապայմանները չունի: Բացի դրանից, Գյուղատնտեսության ազգային

խորհուրդը գտնում է, որ այդ կալվածքի վրա նոր շինությունների կառուցումն ամենայն հավանականությամբ կստեղծի դժվարություններ ակտիվ ազարակապանի համար՝ իր բիզնեսը զարգացնելու հարցում»:

Գյուղատնտեսության ազգային խորհրդի որոշումից երևում է, որ կալվածքը չունի շինություններ: Այն 41 հեկտար տարածք է, որից 18 հեկտարն անտառներ են, իսկ 8 հեկտարը՝ արոտավայրեր: Որոշումից երևում է նաև, որ պրն Ստյուրենսոնին պատկանում է 10 հեկտար արտոնվայր և 63 հեկտար անտառ: Նրա կալվածքը գտնվում է՝ դիմողների գնած կալվածքից՝ մոտավորապես 25 կիլոմետր հեռավորության վրա: Գյուղատնտեսության ազգային խորհրդի որոշումից պարզ է դառնում, որ կալվածքը գնելով՝ դիմողները մտադիր էին այնտեղ կառուցել շինություններ, որոնք կարճ ժամանակում կստեղծեին աշխատանքային հնարավորություններ, իսկ հետագայում կհանդիսանային եկամտաբեր կարողություն իրենց զավակների համար: Որոշումից պարզ է դառնում նաև, որ խնդրո առարկա կալվածքը գտնվում է այնպիսի տարածքում, ուր, տեղական Գյուղատնտեսական խորհրդի կարծիքով, կարող է աշխատել միայն մեկ ազարակապան, և որ հարևան կալվածքը ներկայումս վարձակալել է պրն MB-ն: Վերջինս նաև վարձակալել է իր ծնողների կալվածքը, որը կազմված է 5 հեկտար արոտավայրից և 42 հեկտար անտառից: Պրն MB-ն մեծ հետաքրքրություն է ցուցաբերել խնդրո առարկա կալվածքի նկատմամբ:

Դիմողները դիմել են Կառավարություն (Գյուղատնտեսության նախարարություն), որը 1981թ. փետրվարի 26-ի որոշմամբ մերժել է գանգատը:

1982թ. հունվարի 4-ին ներկայացված նոր խնդրանքը՝ Ռիսբոկե 1:3 կալվածքը պահպանելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, մերժվել է տեղական Գյուղատնտեսական խորհրդի կողմից՝ 1982թ. հունվարի 25-ին: Իր որոշման մեջ խորհուրդը նշել է, որ խնդրո առարկա կալվածքը համարվում է ռացիոնալիզացման նպատակների համար պիտանի և պետք է օգտագործվի այդ տարածքում գտնվող հողամասերը միավորելու և դրանց հետագա զարգացումն ապահովելու համար: Խորհուրդը նաև նշել է, որ պատրաստ չէ կալվածքը հետ գնել 240.000 SEK-ով:

Դիմողներն այս որոշումը բողոքարկել են Ազգային Գյուղատնտեսական խորհուրդ, որը կալվածքը գննելուց հետո՝ 1982թ. նոյեմբերի 15-ին մերժել է բողոքը:

Կառավարությանն ուղղված՝ դիմողների հաջորդ գանգատը մերժվել է 1983թ. հոկտեմբերի 27-ին:

1985թ. հունվարի 11-ի նամակով դիմողները դիմել են Կառավարությանը՝ վերանայելու 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշումը: Կառավարությունը 1985թ. մարտի 14-ի որոշմամբ որոշել է այլևս չհանդրադառնալ այդ գանգատին: Այդ որոշմամբ Կառավարությունը հիշեցրել է, որ այդ գանգատի կապակցությամբ արդեն որոշում է կայացվել 1983թ. հոկտեմբերի 27-ին:

Դիմողները, այնուհետև, հայց են հարուցել Վեքսյոյի անշարժ գույքի դատարան՝ պահանջելով, որ Կառավարությունը հետ գնի կալվածքը՝ համաձայն Հողամասերի ձեռքբերման մասին օրենքի 14-րդ բաժնի: 1981թ. դեկտեմբերի 11-ի վճռում դատարանը մերժել է հայցը: Դիմողները վճիռը բողոքարկել են Գոթայի վերաքննիչ դատարան, որը 1982թ. հուլիսի 1-ին հաստատել է Անշարժ գույքի դատարանի վճիռը: 1983թ. հուլիսի 14-ին Գերագույն դատարանը մերժել է գանգատի ընդունումը:

Տեղական Գյուղատնտեսական խորհրդի պահանջով տեղական Վարչական խորհուրդը կարգադրել է նոյեմբերի 10-ին հարկադիր աճուրդով վերավաճառել Ռիսբոկե 1:3 կալվածքը: 1984թ. ապրիլի 19-ի որոշմամբ

հարկադիր կատարման ծառայությունը հաստատել է, որ կալվածքի արժեքը 125.000 SEK է: Դիմողները բողոք են ներկայացրել Գոթայի վերաքննիչ դատարան, սակայն դատարանը մերժել է նրանց բողոքը 1984թ. հունիսի 4-ին՝ պատճառաբանելով, որ հնարավոր չէ բողոքարկել հարկադիր ծառայության որոշումը, քանի որ դա նախապատրաստական քայլ է կալվածքը վաճառելու վերաբերյալ որոշման համար: Դիմողներն այս որոշումը բողոքարկել են Գերագույն դատարան, որը բողոքի ընդունումը մերժել է 1984թ. օգոստոսի 23-ին:

Փորձագետների հետագա գնահատման համաձայն՝ կալվածքի արժեքը համարվել է 172.000 SEK-ը:

Աճուրդը տեղի է ունեցել 1985թ. հունիսի 18-ին: Նշվել է, որ կալվածքի արժեքը 172.000 SEK է, իսկ հարկվող արժեքը՝ 107.000 SEK: Առաջարկվող նվազագույն գումարը կարող էր լինել 172.000 SEK: Աճուրդին կատարվել է 172.000 SEK-ի միայն մեկ առաջարկ: Առաջարկն արել է տեղական Գյուղատնտեսական խորհուրդը: Առաջարկն ընդունվել է հարկադիր ծառայության կողմից:

Դիմողներն աճուրդը բողոքարկել են Գոթայի վերաքննիչ դատարան, որը 1985թ. հուլիսի 3-ի որոշմամբ մերժել է բողոքը:

Այնուհետև դիմողները բողոք են ներկայացրել Գերագույն դատարան, որը 1985թ. օգոստոսի 20-ի որոշմամբ մերժել է բողոքի ընդունումը:

Շվեդական համապատասխան օրենսդրությունը

Անշարժ գույքի ձեռքբերումը, որը հարկման նպատակներով համարվում է գյուղատնտեսական միավոր, կարգավորվում է Հողամասերի ձեռքբերման մասին 1979թ. օրենքով: Օրենքն ընդունվել է 1979թ.՝ փոխարինելով նույն հարաբերությունները կարգավորող 1965թ. օրենքին, և նպատակ է ունեցել իրականացնել Ռիքստագի կողմից 1977թ. ընդունված գյուղատնտեսական ուղենիշները, ինչպես նաև իրագործել անտառտնտեսության և տարածքային պլանավորման քաղաքականության նպատակները:

Օրենքի 1-ին բաժնի համաձայն՝ հարկման նպատակներով որպես գյուղատնտեսական միավոր գնահատված անշարժ գույք ձեռք բերելու համար պահանջվում է թույլտվություն: 2-րդ բաժինը նախատեսում է մի շարք բացառություններ, որոնցից ոչ մեկը չի առնչվում դիմողների գործին:

Թույլտվության վերաբերյալ դիմումների կապակցությամբ որոշում ընդունելիս՝ իշխանությունները պետք է նկատի ունենան, որ անհրաժեշտ է նպաստել գյուղատնտեսության և այգեգործության ոլորտներում ռացիոնալ ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմանը և զարգացմանը (Բաժին 3): Բացի դրանից, համաձայն 4-րդ բաժնի՝ թույլտվության վերաբերյալ դիմումը մերժվում է, *inter alia*, եթե հողամասն անհրաժեշտ է գյուղատնտեսության կամ անտառտնտեսության ռացիոնալիզացման համար:

Այնպիսի հանգամանքներում հարկադիր աճուրդում ձեռք բերված հողամասը, որը սովորական գնման դեպքում կպահանջեր թույլտվություն, 16-րդ բաժնի 1-ին կետի համաձայն, պետք է վերավաճառվի երկու տարվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանգամանքները դադարել են գոյություն ունենալուց, կամ գնորդը տեղական Գյուղատնտեսական խորհրդից ձեռք է բերել հողամասը պահելու թույլտվություն: Նման թույլտվության համար դիմելու դեպքում, վերոհիշյալ՝ 3-րդ և 4-րդ բաժինների դրույթները կիրառվում են ըստ անհրաժեշտության:

Տեղական գյուղատնտեսական խորհրդի որոշումը՝ աճուրդում ձեռք բերված հողամասը պահպանելու թույլտվություն չտրամադրելու մասին, կարող է բողոքարկվել Ազգային գյուղատնտեսական խորհուրդ, իսկ այնուհետև՝ Կառավարություն:

Եթե առքը համարվում է անվավեր այն հիմքով, որ անհրաժեշտ թույլտվությունը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հողամասը ծառայելու է գյուղատնտեսության և անտառտնտեսության ռացիոնալիզացմանը, պետությունը, համաձայն Օրենքի 14-րդ բաժնի, պարտավոր է հողամասը հետ գնել՝ առքի համաձայնեցված գնով, եթե այդ է պահանջում վաճառողը: Այնուամենայնիվ, նույն բաժնի համաձայն՝ նման պարտավորությունը չի գործում, եթե առքի արժեքն աննշան չափով է գերազանցում հողամասի արժեքը՝ եկամտի կամ այլ հանգամանքների տեսանկյունից, կամ եթե մյուս պայմանները ողջամիտ չեն:

Հարկադիր աճուրդում ձեռք բերված հողամասի կապակցությամբ, ի տարբերություն սովորական գնման դեպքի, պետությունը չունի հողամասը հետ գնելու պարտավորություն:

Համաձայն 14-րդ բաժնի 2-րդ կետի՝ հողամասը հետ գնելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են Անշարժ գույքի հարցերով դատարան, որի որոշումները կարող են բողոքարկվել Վերաքննիչ դատարան, և այնուհետև՝ Գերագույն դատարան:

Եթե հողամասը, երբ պահանջվում է վերոհիշյալ դրույթներով, չի վաճառվել սահմանված ժամկետում, տեղական Վարչական խորհուրդը, համաձայն 16-րդ բաժնի 1-ին կետի, կարգադրում է, որ հողամասը պետք է հարկադիր ծառայության կողմից վաճառվի հարկադիր աճուրդում:

Նման աճուրդը կարգավորվում է Օրենքի 17-րդ բաժնի և 1981թ. Կատարման օրենսգրքի 12-րդ գլխի դրույթներով: Աճուրդում վաճառքը հնարավոր է միայն այն դեպքում, եթե առքի առաջարկված գինն առնվազն հավասար է մինչև աճուրդը հողամասի համար սահմանված արժեքին: Այս արժեքը սահմանում է հարկադիր ծառայությունը կամ, հողամասի սեփականատիրոջ՝ հատուկ գնահատման վերաբերյալ ժամանակին ներկայացրած պահանջի դեպքում, տեղական Վարչական խորհրդի կողմից նշանակված գնահատողները:

Հարկադիր աճուրդի վերաբերյալ հարկադիր ծառայության որոշումները, Կատարման օրենսգրքի 18-րդ գլխի 1-ին բաժնի համաձայն, բողոքարկվում են Վերաքննիչ դատարան, և այնուհետև՝ Գերագույն դատարան: Սակայն, համաձայն նույն գլխի 6-րդ բաժնի 2-րդ կետի, եթե որոշումը սոսկ նախապատրաստական քայլ է վերջնական որոշում կայացնելու համար, ապա բողոքը, ընդհանուր առմամբ, պետք է առնչվի վերջինիս:

Բողոք ներկայացնելու դեպքում կիրառվում են 1942թ. Դատավարական օրենսգրքի դրույթները՝ այնքանով, որքանով դրանք առնչվում են սույն գործին: Այդ դրույթները կիրառվում են Կատարման օրենսգրքի 18-րդ գլխի 1-ին բաժնի հղման ուժով: Դատավարական օրենսգրքի 52-րդ գլխի 10-րդ բաժնի համաձայն՝ կողմը կամ որևէ այլ անձ կարող է, եթե անհրաժեշտ է համարում, բանավոր բացատրություններ տալ Վերաքննիչ դատարանում: Նույն ընթացակարգն է կիրառվում Գերագույն դատարանում:

Դատավարական օրենսգրքի 54-րդ գլխի 10-րդ բաժնի համաձայն՝ Գերագույն դատարանը թույլատրում է բողոքը.

«1. եթե այն կարևոր է օրենքի կիրառման կապակցությամբ ուղղություն ցույց տալու համար, որի դեպքում գործը պետք է քննվի Գերագույն դատարանում, կամ

2. եթե նման քննության համար կան բացառիկ պատճառներ, օրինակ, վարույթը նորոգելու պատճառներ կամ տեղի են ունեցել դատավարական սխալներ կամ Վերաքննիչ դատարանում գործի ելքը պայմանավորված է եղել ակնհայտ կոպիտ սխալով կամ անփութությամբ»:

ԳԱՆԳԱՏՆԵՐ

1. Դիմողները պնդել են, որ անշարժ գույքը պահելու համար իրենց թույլտվություն տրամադրելու մերժումը որոշում է իրենց քաղաքացիական իրավունքների վերաբերյալ, և, ուստի, իրենք իրավունք ունեն օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքներից: Դիմողները վիճարկել են՝ որ քանի որ իրենք չեն ունեցել դատական վերանայման հնարավորություն, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

2. Դիմողները նաև գանգատվել են այն որոշումներից, որոնք գործի վարույթի տարբեր փուլերում անշարժ գույքին տարբեր արժեքներ են տվել: Այդ շուկայական արժեքը տատանվել է 100.000 SEK-ից մինչև 172.000 SEK: Դիմողները պնդել են, որ այս արհեստական շուկայական գները լուրջ միջամտություն են եղել դիմողների՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածով սահմանված իրավունքներին:

Դիմողները պնդել են, որ այն փաստը, որ պետությունն առաջին աճուրդում 1979թ. դեկտեմբերին կալվածքը դիմողներին վաճառել է 240.00 SEK-ով և այն փաստը, որ 1985թ. հունիսին պետությունը հետ է գնել կալվածքը 172.000 SEK-ով, պետք է դիտվի որպես սեփականության բռնագրավում, ինչը չի կարող արդարացվել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պայմաններով: Դիմողները գանգատ են ներկայացրել նաև այն փաստի վերաբերյալ, որ իրավասու դատարանները պետությանը չեն պարտավորեցրել հետ գնել կալվածքը, ինչպես իրենք պահանջում էին:

3. Դիմողները նաև պնդել են, որ այն փաստը, որ Վերաքննիչ դատարանը և Գերագույն դատարանը 1985թ. հունիսի աճուրդի դեմ բողոքները քննել են առանց բանավոր լսումների, հանդիսանում է միջամտություն՝ ըստ և՛ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, և՛ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի: Դիմողները նաև պնդել են, որ այս հարցերով դատարաններ ներկայացրած բողոքները ցույց են տվել, որ չի եղել պաշտպանության որևէ արդյունավետ միջոց, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածով:

4. Դիմողները նաև վիճարկել են Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ՝ կապված այն փաստի հետ, որ կալվածքը պահելու համար թույլտվության տրամադրումը մերժվել է պարզապես նրա համար, որ դիմողներն այն տարածքի բնակիչներ չեն, ուր գտնվում է կալվածքը:

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Գանգատը ներկայացվել է 1984թ. ապրիլի 3-ին և գրանցվել է 1985թ. նոյեմբերի 15-ին:

1986թ. մայիսի 12-ին Հանձնաժողովը որոշել է Կառավարությանը հրավիրել ներկայացնելու իր գրավոր բացատրությունները գանգատի ընդունելիության և ըստ էության հարցերի վերաբերյալ՝ սահմանափակված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա ներկայացված գանգատներով:

Կառավարության բացատրություններն ստացվել են 1986թ. օգոստոսի 21-ի նամակով, և դիմողների՝ ի պատասխան բացատրությունները՝ 1986թ. հոկտեմբերի 9-ին:

1986թ. դեկտեմբերի 12-ին Հանձնաժողովը որոշել է դիմողներին տրամադրել իրավաբանական օգնություն:

1987թ. մարտի 4-ին Հանձնաժողովը որոշել է կողմերին հրավիրել զանգատի ընդունելիության և ըստ էության հարցերի վերաբերյալ լսումների:

1987թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած նիստին կողմերին ներկայացրել են.

Կառավարությունը

Պրն Հանս Կորելը	Իրավական և խորհրդատվական հարցերի քարտուղար, դեսպան, Արտաքին գործերի նախարարություն, ներկայացուցիչ
Պրն Ռոլֆ Սթրոմբերգ	Մշտական քարտուղար և իրավաբանական բաժնի պետ, Շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարարություն, խորհրդատու,
Պրն Հաքան Բերգլին	Իրավախորհրդատու, Արտաքին գործերի նախարարություն, խորհրդատու.

դիմողներին

Պրն Գոյան Ռավնսբուրգը Համալսարանի դասախոս

ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Ա. Կառավարությունը

1. Ընդունելիությունը

Կառավարությունը որևէ առարկություն չի ունեցել ներպետական պաշտպանության միջոցներն սպառելու՝ Կոնվենցիայի 26-րդ հոդվածով նախատեսված կանոնի կապակցությամբ:

Այնուամենայնիվ, Կառավարությունը պնդել է, որ կալվածքը պահելու թույլտվությունը մերժելու վերաբերյալ որոշման կապակցությամբ զանգատը պետք է անընդունելի հայտարարվի, քանի որ չի պահպանվել վեց ամսվա կանոնը: Կառավարությունը նաև պնդել է, որ գույքը հետ գնելու ընթացքի հետ կապված ցանկացած զանգատ անընդունելի է վեց ամսվա կանոնը չպահպանելու պատճառով: Բացի դրանից, կալվածքի հրապարակային վաճառքի վերաբերյալ զանգատն անընդունելի է՝ ակնհայտորեն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Գանգատը վերաբերում է վարույթի երեք տարբեր փուլերի. առաջին, այն հարցին վերաբերող փուլին, թե արդյոք պետք է դիմողներին տրամադրվեր կալվածքը պահելու թույլտվություն, երկրորդը վերաբերում է կալվածքը պետության կողմից հետ գնելուն, երրորդը՝ հրապարակային աճուրդին, որում կալվածքը ձեռք էր բերել Գյուդատնտեսական խորհուրդը: Այս երեք վարույթների կապակցությամբ վերջնական որոշումներն ընդունվել են համապատասխանաբար 1981թ. փետրվարի 26-ին, 1983թ. հուլիսի 14-ին և 1985թ. օգոստոսի 20-ին: Գանգատը Հանձնաժողով է ներկայացվել 1984թ. ապրիլի 3-ին: Ուստի հարց է ծագում, թե արդյոք դիմողները զանգատի այն

մասերի կապակցությամբ, որոնք վերաբերում են առաջին երկու վարույթներին, պահպանվել են 26-րդ հոդվածով նախատեսված վեցամսվա կանոնը: Կառավարության կարծիքով՝ հարցին պետք է բացասական պատասխան տրվի:

Վարույթի երեք տարբեր հատվածներում բարձրացվել են տարբեր հարցեր, որոնք պետք է լուծվեին տարբեր փաստերի հիման վրա և տարբեր իրավաբանական նորմերի կիրառմամբ: Երկրորդ և երրորդ վարույթների արդյունքները չեն ազդել և չէին կարող ազդել նախորդ լուծումների վրա: Վարույթները կատարվել են տարբեր դրույթների հիման վրա, և առաջին երկու վարույթները նախաձեռնվել էին դիմողի կողմից, մինչդեռ երրորդը կարող էր նախաձեռնվել միայն պետության կողմից: Այս հանգամանքներում Կառավարությունը պնդել է, որ երեք վարույթները պետք է դիտարկվեն միմյանցից անջատ, երբ կիրառվում է Կոնվենցիայի 26-րդ հոդվածով նախատեսված կանոնը:

Հանձնաժողովն իր նախադեպային իրավունքում հետևողականորեն ուշադրություն է հրավիրել այս կանոնի և նույն հոդվածում նշված՝ ներպետական պաշտպանության միջոցներն սպառելու կանոնի միջև առկա սերտ փոխհարաբերությանը, և «վերջնական որոշում» հասկացությունը մեկնաբանել է այնպես, որ բացառապես վերաբերում է այն վերջնական որոշմանը, որը պահանջվում է ներպետական պաշտպանության միջոցները սպառելու կանոնը բավարարելու համար: Հանձնաժողովը, վեցամսյա ժամկետը հաշվելու նպատակի համար հետևողականորեն մերժել է հաշվի առնել այն որոշումները, որոնք ընդունվել են ներպետական պաշտպանության միջոցներն սպառելու գործընթացում, սակայն դրանց սպառումն անհրաժեշտ չի եղել:

Սույն գործում պարզ է, որ վարույթի երրորդ փուլը, որի արդյունքում ընդունվել է 1985թ. օգոստոսի 20-ի որոշումը, չի կարող լինել պաշտպանության միջոց 1981թ. փետրվարի 26-ի և 1983թ. հուլիսի 14-ի որոշումների կապակցությամբ, որն անհրաժեշտ էր սպառել, որպեսզի այդ որոշումների վերաբերյալ զանգատներն ընդունելի լինեին Հանձնաժողովի կողմից: Բավական է նկատել, որ այդ որոշումների առնչությամբ Կոնվենցիայի ոչ մի հնարավոր խախտում չէր կարող որևէ կերպ շտկվել այն վարույթի ընթացքում, որի արդյունքում ընդունվել է 1985թ. օգոստոսի 20-ի որոշումը, և որ, փաստորեն, դիմողներն իրավունակ չեն եղել նախաձեռնելու այդ վարույթը: Հետևաբար, վեցամսվա կանոնը 1981թ. փետրվարի 26-ի և 1983թ. հուլիսի 14-ի որոշումների նկատմամբ կիրառելիս՝ 1985թ. օգոստոսի 20-ի որոշումը չպետք է հաշվի առնվի: Համապատասխանաբար, առաջին երկու որոշումների կապակցությամբ Կառավարությունը պնդում է, որ դիմողները չեն պահպանել վեց ամսվա կանոնը:

Դիմողներին՝ կալվածքը պահելու թույլտվություն տրամադրելու հարցի վերաբերյալ վարույթը պահանջում է որոշ հետագա մեկնաբանություններ՝ ելնելով այն փաստից, որ 1981թ. փետրվարի 26-ի որոշմամբ այդ հարցի վերջնական կարգավորումից հետո նույն հարցը նորից քննարկվել է դիմողների բողոքի հիման վրա: Այս հարցի կապակցությամբ Կառավարությունն առաջին հերթին նկատում է, որ 1981թ. փետրվարի 26-ի որոշումը վերջնական է այն իմաստով, որ բացառությամբ հատուկ վարույթի հնարավորության, նախատեսված չէ որևէ ներպետական պաշտպանության միջոց, որով հնարավոր կլիներ որևէ հիմքով վիճարկել այդ որոշումը: 26-րդ հոդվածով սահմանված վեց ամսվա կանոնը հստակորեն միտված է նրան, որ դիմողից պահանջվում է որոշել, թե պե՞տք է, արդյոք, իր գործը ներկայացնի Հանձնաժողով վեց ամսվա ընթացքում՝ այն պահից սկսած, երբ

իր կարգավիճակը վերջնականապես որոշվել է ներպետական մակարդակում: Ելնելով սրանից՝ Կառավարությունը պնդում է, որ կալվածքը պահելու թույլտվություն տրամադրելու վերաբերյալ վարույթի կապակցությամբ 1981թ. փետրվարի 26-ի որոշումը հանդիսանում է «վերջնական որոշում»՝ 26-րդ հոդվածի իմաստով:

Հետևաբար, 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշումը, որն ընդունվել է հարցը կրկին քննության առնելու վերաբերյալ դիմումի հիման վրա, ըստ կառավարության՝ չպետք է հաշվի առնվի վեցամսյա ժամկետը հաշվարկելիս: Այնուամենայնիվ, և, մասնավորապես, հաշվի առնելով որոշման ձևակերպումը, դեռևս հարկ է քննության առնել, թե արդյո՞ք որոշումը՝ որպես այդպիսին, և անկախ 1981թ. փետրվարի 26-ի որոշումից, կարող էր դիտվել որպես նոր «վերջնական որոշում»՝ 26-րդ հոդվածի նպատակների համար: Կառավարության կարծիքով՝ այս հարցին պետք է բացասական պատասխան տրվի: 1979թ. դեկտեմբերի 4-ի հրապարակային աճուրդից հետո դիմողները պարտավոր էին աճուրդի վավերական դառնալու օրվանից հետո երկու տարվա ընթացքում վաճառել կալվածքը, եթե չստանային տեղական Գյուղատնտեսական խորհրդի թույլտվությունը՝ կալվածքը պահելու վերաբերյալ: Քանի որ որևէ զանգատ ընդդեմ աճուրդի չի ներկայացվել, այս երկամյա ժամկետը պետք է հաշվվեր 1979թ. դեկտեմբերի 18-ից սկսած և պետք է ավարտվեր 1981թ. դեկտեմբերի 18-ին: Մինչ վերջին նշված ժամանակը, կալվածքը պահելու թույլտվություն ստանալու փոխարեն, նման թույլտվության վերաբերյալ դիմողների պահանջը վերջնականապես մերժվել է Կառավարության կողմից՝ 1981թ. փետրվարի 26-ին: Հետևաբար, Հողամասերի ձեռքբերման մասին օրենքի 16-րդ բաժնի 1-ին կետով նախատեսված՝ կալվածքը վերավաճառելու պարտավորությունը կատարելու վերջնական ժամկետը 1981թ. դեկտեմբերի 18-ն էր: Խնդրո առարկա վարույթն այժմ չի նախաձեռնվել մինչև 1982թ. հունվարի 4-ը, երբ դիմողները խնդրել են տեղական Գյուղատնտեսական խորհրդին նորից քննության առնել գործը: Այս հանգամանքներից ելնելով՝ Կառավարությունը պնդում է, որ այդ կերպ նախաձեռնված վարույթը կարող է դիտվել միայն որպես հատուկ վարույթ, որը բացառիկ հանգամանքներում կարող է հանգեցնել արդեն վերջնականապես լուծված գործի նորոգմանը: Այլ տեսակետ ընդունելը 26-րդ հոդվածով սահմանված վեց ամսվա կանոնը կդարձնի վերացական՝ ցանկացած որոշման առնչությամբ, որը, 1981թ. փետրվարի 26-ի որոշման նման, չի ունեցել *res judicata* ազդեցություն:

2. Գործի էությունը

2.1 Դիմողներին՝ կալվածքը պահելու թույլտվություն տրամադրելու մերժումը

Դիմողները պնդել են, որ կալվածքը պահելու թույլտվության տրամադրումը մերժելը վերաբերել է իրենց «քաղաքացիական իրավունքները» որոշելուն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, և այդ իրավունքները որոշելու հետ կապված վարույթը չի բավարարել նշված հոդվածի պահանջները:

Կառավարությունն առարկել է, որ որոշվել են դիմողների «քաղաքացիական իրավունքները»: Կառավարությունը նշել է, որ սույն գործն ունի որոշակի առանձնահատկություններ: Այն ունի առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է Ռինգեյգենի գործից (ՄԻԵԿ, Ռինգեյգենի 1971թ. հուլիսի 16-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 13), գործ,

որն առավել մոտ է այս գործին: Սույն գործում կալվածքը ձեռք է բերվել հրապարակային աճուրդում, այլ ոչ թե սովորական կարգով՝ մասնավոր վաճառողից: Բացի դրանից, Ռինգեյզենի գործում համապատասխան որոշման հետևանքներն ավելի հեռուն գնացող են, քանի որ այդ որոշման համաձայն վաճառքն առաջին է ճանաչվել: Սույն գործում կալվածքը պահպանելու թույլտվություն չտրամադրելու վերաբերյալ որոշումը հանգեցրել է կալվածքը վաճառելու պարտավորության կատարմանը: Որևէ ազդեցություն վաճառքի վրա՝ որպես այդպիսին, տեղի չի ունեցել: Կառավարության կարծիքով, այս առանձնահատկություններն էական նշանակություն ունեն այն հարցում, թե արդյոք վարույթը պետք է համարվի «քաղաքացիական իրավունքների» վերաբերող՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

Այն դեպքում, եթե Հանձնաժողովը կգտնի, որ տվյալ որոշումը համարվում է դիմողների «քաղաքացիական իրավունքները» որոշող՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, Կառավարությունն ընդունում է, որ դիմողներն իրավունք չունեն նախաձեռնելու վարույթ՝ նշված հոդվածի պահանջներից ելնելով:

2.2 Կալվածքը հետ չգնելու մասին որոշումը

Հաշվի առնելով այն փաստը, որ դիմողները Կոնվենցիայի կամ թիվ 1 արձանագրության որևէ խախտում չեն վիճարկել այս որոշման և դրան նախորդած վարույթի կապակցությամբ, Կառավարությունը միայն նկատում է, որ Կոնվենցիայից կամ թիվ 1 արձանագրությունից չի կարող բխեցվել պետության կալվածքն այնպիսի եղանակով հետ գնելու պարտավորությունը, որը պահանջում են դիմողները: Հետևաբար, այնքանով, որքանով այս կապակցությամբ դիմողների ներկայացրած պահանջները կարող էին դիտվել որպես առանձին զանգատ, Կառավարությունը պնդում է, որ այն պետք է մերժվի այն պատճառաբանությամբ, որ դուրս է Կոնվենցիայի և թիվ 1 արձանագրության շրջանակից:

Բացի դրանից, հաշվի առնելով, որ այդ որոշումը որևէ կերպ չի ազդել դիմողների փաստացի կամ իրավական կարգավիճակի վրա՝ կապված նրանց գույքի հետ, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա հիմնված ցանկացած զանգատ ակնհայտորեն անհիմն է:

2.3. Կալվածքի հրապարակային աճուրդը

2.3.1. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը

Ըստ դիմողների՝ մինչև 1985թ. հունիսի 18-ի աճուրդը կալվածքի արժեքը 172.000 SEK գնահատելը և այդ կալվածքի հրապարակային վաճառքն այդ գնով հանդիսանում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, քանի որ իրենք այդ կալվածքը ձեռք էին բերել 240.000 SEK-ով: Կալվածքի գնահատումն ավելին չէր, քան նախապատրաստական քայլ՝ հաշվի առնելով հետագա աճուրդը:

Կառավարությունը նշում է, որ դիմողները «զրկվել են իրենց սեփականությունից»՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստով՝ կալվածքի վիճարկվող հրապարակային աճուրդի ուժով: Այնուամենայնիվ, հետևյալ պատճառներով Կառավարությունը պնդում է, որ դիմողների իրավունքին պետության նման միջամտությունն արդարացված էր նույն հոդվածի պայմաններով:

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ նախադասության ձևակերպումից հետևում է՝ որպեսզի սեփականությունից զրկելը չհամարվի այդ հոդվածի խախտում, այն պետք է կատարվի «ի շահ հասարակության» և «օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններին» համապատասխան: Բացի դրանից, Ջեյմսի և այլոց գործի կապակցությամբ (ՄԻԵԴ, Ջեյմսի և այլոց 1986թ. փետրվարի 21-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 98, էջ 29, կետ 37) Դատարանը գտել է, որ երկրորդ նախադասությունը պետք է դիտարկվի հոդվածի առաջին նախադասությունում ամրագրված սկզբունքների լույսի ներքո: Այս վերջին դրույթը, իր հերթին, Սպորոնգի և Լյոնրոֆի գործում (ՄԻԵԴ, Սպորոնգի և Լյոնրոֆի 1982թ. սեպտեմբերի 23-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 52), ինչպես նաև վերոհիշյալ և Լիֆգոյի գործերում (ՄԻԵԴ, Լիֆգոյի և այլոց 1986թ. հուլիսի 8-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 102) ըստ Դատարանի մեկնաբանության՝ պահանջում է, որ այլ կերպ արդարացված միջամտության դեպքում հաստատվի արդարացի հավասարակշռություն հասարակական շահի պահանջների և անհատի իրավունքների պաշտպանության միջև:

«ի շահ հասարակության»

Հողամասերի ձեռքբերման մասին օրենքը, իրավական հիմք հանդիսանալով դիմողների կալվածքի հրապարակային վաճառքի համար, ընդունվել է գյուղատնտեսության, անտառտնտեսության և տարածքային պլանավորման քաղաքականության խնդիրների իրականացման նպատակով: Վիճարկվող աճուրդը տեղի է ունեցել որպես Օրենքի դրույթների կատարման միջոց, որը նպատակ ունի զարգացնելու ռացիոնալ և արդյունավետ ֆերմերային տնտեսությունները: Ելնելով սրանից և հաշվի առնելով, որ Սարդու իրավունքների եվրոպական դատարանը «հասարակական շահ» հասկացությանը հաղորդել է «անհրաժեշտաբար լայն» իմաստ և նաև ներպետական իշխանություններին տրամադրել է «գնահատման շրջանակ» հասարակական կարիքները և դրանք բավարարելու համար անհրաժեշտ միջոցները գնահատելիս Կառավարությունը պնդում է, որ դիմողների իրավունքին պետության միջամտությունը կատարվել է «ի շահ հասարակության»՝ 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստով: Կառավարությունը նաև նկատում է, որ ամենայն հավանականությամբ դիմողները որևէ այլ կարծիք չեն ներկայացրել:

«Օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններ»

Կառավարությունն առաջին հերթին նկատում է, որ Հանձնաժողովում որևէ պնդում չի կատարվել առ այն, որ աճուրդը չի կատարվել շվեդական օրենսդրությանը համապատասխան: Այնուամենայնիվ, ըստ Եվրոպական դատարանի հետևողական մեկնաբանության՝ Կոնվենցիայում և արձանագրություններում «օրենք» և «օրինական» հասկացությունները պարզապես հղում չեն կատարում ներպետական օրենքին, «այլ նաև վերաբերում են օրենքի որակին, որը պետք է համապատասխանի իրավական պետության գաղափարին»: Չնայած՝ այս պահանջի հստակ իմաստը կարող է դեռևս կասկածելի թվալ, և նաև տարբերվել ըստ հանգամանքների, Դատարանի նախադեպային իրավունքից ողջամտորեն կարելի է եզրակացնել, որ սույն համատեքստում օրենքը՝ երկրորդ

նախադասության պահանջները բավարարելու համար, պետք է տրամադրի ողջամիտ պաշտպանություն ընդդեմ կամայական միջամտության և, մասնավորապես, պետք է նախատեսի այն հանգամանքները և պայմանները, որոնց դեպքում կարող է տեղի ունենալ միջամտություն:

Սույն գործի հանգամանքները վերոհիշյալ դատողությունների հիման վրա քննության առնելիս՝ Կառավարությունը պնդում է, որ միջամտությունը միայն «օրենքով նախատեսված պայմաններով» կատարելու պահանջը ևս բավարարված է: Այսպիսով, բացի այն արժեքից, որով կալվածքը, վերջին հաշվով, վաճառվել է, հրապարակային վաճառքի յուրաքանչյուր նյութական, ինչպես նաև ընթացակարգային ասպեկտ կարգավորվել է գրված օրենքով, որը մատչելի է եղել դիմողներին: Բացի դրանից, չկա որևէ ապացույց առ այն, որ դիմողները լիարժեք կերպով փաստացիորեն չեն տեղեկացվել այդ օրենսդրական դրույթների և դրանց հավանական հետևանքների վերաբերյալ: Վերջապես, հրապարակավ հայտարարված՝ կալվածքի գնահատված շուկայական արժեքն այն ժամանակ, երբ դիմողները ձեռք են բերել այն՝ 140.000 SEK-ով, նախատեսել է հստակ ուղեցույց այդ կալվածքի հնարավոր արժեքի վերաբերյալ՝ այդ դրույթների համաձայն հետագա հրապարակային վաճառքի դեպքում:

Ինչ վերաբերում է «միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներ» արտահայտությանը, Կառավարությունը նկատում է, որ երկու դիմողներն էլ Շվեդիայի քաղաքացիներ են: Ուստի, հաշվի առնելով այն, որ Եվրոպական դատարանը գտել է, որ այս սկզբունքները կիրառելի են միայն օտարերկրացիների նկատմամբ (տես՝ Ջեյմսի և այլոց վերոհիշյալ վճիռը, էջեր 38-40, կետեր 58-66), ոչ մի առանձին հարց չի ծագում այս մասնավոր պահանջի առնչությամբ:

Արդարացի հավասարակշռություն հասարակական շահի և անհատի իրավունքների պաշտպանության միջև

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում այս պահանջի մեկնաբանության՝ ցանկացած միջամտություն, որպեսզի արդարացի 1-ին հոդվածի հիման վրա, պետք է «լինի պատշաճ իր նպատակին հասնելու համար և պետք է համարժեք լինի դրան» և որ, համապատասխանաբար, պահանջվող հավասարակշռությունը կբացակայի, եթե շահագրգիռ անձը սույն գործում ստիպված է եղել կրելու «անհատական և չափազանցված բեռ»: Սա առաջին հերթին պահանջում է քննության առնել, թե արդյոք դիմողների կալվածքի հրապարակային վաճառքն ինքնին համարժեք է եղել հետապնդվող նպատակին և, երկրորդ, արդյոք դիմողները տվյալ հանգամանքներում ստիպված են եղել կրելու ոչ պատշաճ տնտեսական բեռ:

Գյուղատնտեսության և անտառտնտեսության քաղաքական խնդիրները դժվար թե հնարավոր լինեն իրականացնել առանց գյուղատնտեսության և անտառտնտեսության համար պիտանի հողերը ձեռք բերելու և պահելու իրավունքի նկատմամբ համապատասխան սահմանափակումներ կիրառելու: Նման սահմանափակումների շրջանակը և կիրառումը տրամաբանորեն առաջարկում է ձեռնարկվելիք տարաբնույթ հնարավոր միջոցառումներ, որոնցից ոմանք հանդիսանում են լուրջ միջամտություն անհատի սեփականության իրավունքին, ներառյալ՝ նրան սեփականությունից զրկելը:

Ինչ վերաբերում է նման հնարավոր միջոցառումների միջև ընտրությանը, «ի շահ հասարակության» հասկացությունը հստակորեն առաջարկում է, որ

պետություններին տրամադրվող հայեցողության շրջանակն ավելի լայն է, քան այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է Կոնվենցիայի նույնատիպ դրույթների, օրինակ՝ 8-10 հոդվածներին, որոնցում օգտագործվում է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» հասկացությունը: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելիս՝ Հանձնաժողովը նախկին հայեցակարգը դիտել է որպես «հստակ միջոցառումներ, որոնք պետք է նախընտրելի կամ նպատակահարմար լինեն, և ոչ միայն կարևոր, ժողովրդավարական հասարակությունում» (Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության, Հանձնաժողովի գեկույց, 30.9.75, կետ 167):

Ելնելով կիրառվելիք այն միջոցառումների կապակցությամբ պետություններին տրամադրվող լայն հայեցողությունից, որոնք անհրաժեշտ են օրինական քաղաքականության խնդիրներին հասնելու համար, կարելի է ողջամտորեն եզրակացնել, որ սույն գործում կիրառված միջոցառումները համարժեք չէին այն նպատակներին, որոնք հետապնդվում էին:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք դիմողներն ստիպված են եղել կրելու ոչ պատշաճ տնտեսական բեռ, Կառավարությունն առաջին հերթին նկատում է, որ հարկման նպատակի համար կալվածքն ունի ֆիքսված արժեք՝ 107.000 SEK: Այս արժեքը, որպես իրավունքի հարց, միտված է համապատասխանելու շուկայական արժեքի 75 տոկոսին: Բացի դրանից, 1979թ. դեկտեմբերի 4-ի հրապարակային աճուրդի ժամանակ, երբ դիմողները ձեռք են բերել կալվածքը, գնահատված շուկայական արժեքը հրապարակայնորեն հայտարարվել է 140.000 SEK –ը: Վերջապես, 1985թ. հունիսի 18-ի հրապարակային վաճառքից առաջ կալվածքը, դիմողների պահանջով և տեղական Վարչական խորհրդի նշանակած անկախ գնահատողների կողմից գնահատվել է 172.000 SEK, ինչ արժեքով էլ, վերջին հաշվով, կալվածքը գնել է տեղական Գյուղատնտեսական խորհուրդը: Ելնելով սրանից՝ Կառավարությունը պնդում է, որ դիմողներին լիարժեք կերպով փոխհատուցում է տրվել՝ այն իմաստով, որ նրանք փաստորեն ստացել են այն գումարը, որը համապատասխանում է կալվածքի լրիվ շուկայական արժեքին:

Այնուամենայնիվ, դիմողները կալվածքը ձեռք են բերել զգալիորեն ավելի բարձր արժեքով, քան վերջին հաշվով այն վաճառվել է 1985թ. հունիսի 18-ի աճուրդում: Սրանից ելնելով, կարելի է վիճարկել, որ նրանց լրիվ փոխհատուցում չի տրվել: Հիմնվելով պատճառաբանության նման տրամաբանության վրա՝ դիմողները պնդել են, որ այդ հրապարակային վաճառքը հանդիսացել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Հետևյալ պատճառաբանությամբ, Կառավարությունը, նույնիսկ ընդունելով, որ զինը, որով դիմողները ձեռք են բերել կալվածքը, կարող է արտացոլած լինել դրա շուկայական արժեքը, չի կարող կիսել այս տեսակետը:

Կառավարությունը նկատում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի պահանջում որևէ փոխհատուցում՝ ի շահ հասարակության սեփականությունից զրկելու դեպքում: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը հետևողականորեն ընդունել է, որ պետության կողմից սեփականությունն առանց որևէ ձևի փոխհատուցման վերցնելը չի համապատասխանում նշված հոդվածի պահանջներին (տես, Ջեյմսի և այլոց վճիռը, էջ 36, կետ 54, և Լիֆգոյի և այլոց վճիռը, էջեր 50-51, կետեր 121-122): Դատարանը, այնուամենայնիվ, հստակորեն մերժել է այն գաղափարը, որ պետությունը բոլոր դեպքերում պարտավոր է լիովին

փոխհատուցել գույքի սեփականատիրոջը: Գիշտ, այն ինչ պահանջվում է, ըստ Դատարանի, շուկայական արժեքին «ողջամտորեն առնչվող» փոխհատուցումն է: Ի լրումն, փոխհատուցման որոշման կապակցությամբ Դատարանն ընդունել է պետությանը «գնահատման լայն շրջանակ» թույլատրելու անհրաժեշտությունը»:

Ելնելով սրանից՝ Կառավարությունը պնդում է, որ դիմողներին տրամադրվել է պատշաճ փոխհատուցում, ինչպես պահանջվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով:

Ինչ վերաբերում է դիմողների՝ փաստացիորեն կրած տնտեսական կորուստներին, Կառավարությունը հավելում է հետևյալը: Օրենսդրությունը, որը նպատակ ունի իրականացնելու այն քաղաքականության խնդիրները, որոնց վերաբերում է սույն գործը, դժվար թե ծառայեր իր նպատակին՝ առանց այնպիսի իրավիճակներ ստեղծելու, որում անհատն ստիպված պետք է լինի կրելու առաջին հայացքից զգալի թվացող բեռ: Ընդունելով, որ հնարավոր չէ մշտապես խուսափել նման բեռից՝ Եվրոպական դատարանն ընդունել է, որ սկզբունքորեն, համապատասխան օրենսդրական միջոցառումների թերությունների և առավելությունների գնահատումը ներպետական օրենսդրի խնդիրն է, պայմանով միայն, որ, վերջին հաշվով, կիրառվող միջոցառումները չպետք է լինեն «այնչափ ոչ ողջամիտ, որ դուրս լինեն պետության գնահատման շրջանակից» (Ջեյմսի և այլոց վերոհիշյալ վճիռը, էջ 42, կետ 69):

Սույն գործի նկատմամբ այս բանաձևը կիրառելիս՝ Կառավարությունը պնդում է, որ, ելնելով քաղաքականության հետապնդվող նպատակներից, օրենսդրությունում չկա ոչինչ, որ այն ողջամտորեն անընդունելի դարձնի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն: Մասնավորապես, Կառավարությունը նկատում է, որ օրենսդրությամբ նախատեսված մեխանիզմը հատկապես, և պրակտիկայում ընդհանրապես չի հանգեցնում այնպիսի իրավիճակի, ինչպիսին սույն գործում է: Բացի դրանից, այն բացասական հետևանքները, որոնք կրել են դիմողները, մեծամասամբ, ըստ Կառավարության կարծիքի, արդյունք էին այն բանի, ինչն արդարացիորեն կարող էր դիտվել որպես բարձր ռիսկ պարունակող նախաձեռնություն, որին դիմողներն իրենք էին գիտակցաբար գնացել: Թեև դիմողները քաջատեղյակ են եղել, որ կարող էին չստանալ կալվածքը պահելու թույլտվություն, և կալվածքը, վերջին հաշվով, կարող էր վաճառվել հրապարակային աճուրդում, այնուամենայնիվ, նրանք ցանկացել են ձեռք բերել կալվածքն այն արժեքով, որը ձեռքբերման ժամանակ գերազանցել է հրապարակայնորեն հայտարարված՝ գնահատված շուկայական արժեքով՝ 1000.000 SEK-ով, ավելի քան 70 տոկոսով: Այս հանգամանքներում, Կառավարությունը պնդում է, որ սույն գործը չի վկայում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի որևէ խախտման մասին, նույնիսկ եթե ընդունենք, որ դիմողները փաստացիորեն կրել են տնտեսական կորուստ:

Ամփոփելով՝ ընդունելու դեպքում, որ հրապարակային վաճառքը հանդիսացել է միջամտություն դիմողների սեփականության իրավունքին, Կառավարությունը պնդել է, որ միջամտությունը հստակորեն արդարացված է եղել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում սահմանված պայմաններին համապատասխան, և այս կապակցությամբ գանգատն անհիմն է:

2.3.2. Կոնվենցիայի 6-րդ հոդված

Դիմողները հրապարակային վաճառքի կապակցությամբ պնդել են նաև, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն հիմքով, որ նրանց բողոքը քննության է առնվել առանց բանավոր լսումների:

Սույն գործի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության կապակցությամբ, Կառավարությունը որդեգրել է նույն դիրքորոշումը, ինչ կալվածքը պահելու թույլտվությունը մերժելու կապակցությամբ: Հանձնաժողովի կողմից 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի ճանաչվելու պարագայում, Կառավարությունը պնդել է, որ այդ հոդվածի պահանջները սույն գործում բավարարվել են:

Կառավարությունն առաջին հերթին նկատել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետն անհրաժեշտաբար չի պահանջում հրապարակային լսումներ քաղաքացիական իրավունքները կամ պարտականությունները որոշելիս:

Ավելի շուտ, այդ հոդվածը պարզապես նախատեսում է, որ յուրաքանչյուրն իրավունք ունի նման լսումների: Կառավարության կարծիքով, սա պարզորոշ կերպով վկայում է, որ հրապարակային քննության իրավունքից կարելի է հրաժարվել: Եվրոպական դատարանը ևս ընդունել է այդ տեսակետը և, բացի դրանից, ճանաչել է, որ նման հրաժարումը կարող է լինել լռելյայն (տես, Դեվեերի 1980թ. փետրվարի 27-ի վճիռը: Շարքեր Ա. թիվ 35, էջ 25, կետ 49, և Լե Կոնպտի, Վան Լևենի և Դե Սեյերի 1981թ. հունիսի 23-ի վճիռը: Շարքեր, Ա.թիվ 43 կետ 59):

Սույն գործում, վիճարկվող աճուրդը՝ որպես այդպիսին, կատարվել էր հրապարակավ: Բացի դրանից, հրապարակային աճուրդին առնչվող ցանկացած որոշում կարող էր ներկայացվել իրավասու դատարան՝ վերանայելու համար ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի առումով: Բողոքարկման նման վարույթը կարգավորող նորմերը ներառում են դրույթներ, որոնց համաձայն՝ և՛ կողմերին, և՛ վկաներին կարելի է լսել ինչպես վերաքննիչ դատարանում, այնպես էլ Գերագույն դատարանում: Այնուամենայնիվ, նման լսումների վերաբերյալ պահանջ երբևէ չի ներկայացվել դիմողների կողմից, ինչպես նաև ոչ մի հանգամանք չի վկայում այն մասին, որ նրանք ակնկալել են նման լսումների անցկացում, կամ որևէ հնարավոր ձևով նրանք կարող էին օգուտ ակնկալել այդ լսումներից:

Այս հանգամանքներից ելնելով՝ Կառավարությունը պնդում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները բավարարվել են և, հետևաբար, այս կապակցությամբ զանգատն անհիմն է:

Եթե Հանձնաժողովը չկիսի այս կարծիքը, Կառավարությունը կկատարի հետևյալ հարցադրումը. նույնիսկ եթե բանավոր լսումներ պահանջում է շահագրգիռ կողմը, արդյոք 6-րդ հոդվածը պահանջում է բանավոր լսումներ՝ անկախ գործին առնչվող հարցերի բնույթից: Հանձնաժողովն իր բազմաթիվ որոշումներում «արդարացի և հրապարակային լսումներ» հասկացությանը վերաբերվել է այնպես, որ այն ամենը, ինչ պահանջվում է, հետևյալն է. կողմը պետք է ապահովված լինի անհրաժեշտ հնարավորություններով՝ ներկայացնելու և փաստարկելու իր գործը, և հակառակ կողմը չպետք է լինի ավելի բարենպաստ վիճակում՝ իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորությունների կապակցությամբ: Անվիճելի է, որ գործի հանգամանքները կարող են լինել այնպիսին, որ այս պահանջները բավարարելու համար անհրաժեշտ լինի բանավոր լսումների անցկացումը: Այնուամենայնիվ, Կառավարության կարծիքով՝ հավասարապես հասկանալի է թվում, որ որոշակի հանգամանքներում կողմին կարող է տրվել կատարյալ արդարացի հնարավորություն

ներկայացնելու իր գործը, նույնիսկ եթե նրան հնարավորություն չի տրվել դա անել բանավոր լսումներում: Ուստի, քաղաքացիական գործը, որը ներառում է ոչ թե վիճելի փաստեր, այլ միայն իրավական հարցեր, կարող է նույն պատշաճությամբ ներկայացվել և փաստարկվել գրավոր ընթացակարգով, ինչպես բանավոր լսումների դեպքում է:

Այս համատեքստում, Կառավարությունն ուշադրություն է հրավիրում թիվ 1169/61 գանգատի ընդունելիության վերաբերյալ Յանձնաժողովի որոշման վրա, որում Յանձնաժողովը կարծիք է հայտնել, որ երբ դիմողի պահելաձևն ուղղակիերոն չի առնչվում դատարանի կարծիքի ձևավորմանը, գործի քննությունը, ամբողջությամբ գրավոր ընթացակարգով կարող է բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Սույն գործում դատարաններին ներկայացրած միակ հարցն իրավունքի հարց էր, այն է՝ ինչ սկզբունքներ պետք է կիրառվեն կալվածքը գանահատելիս (տես դիմողների բողոքները Գոթայի Վերաքննիչ դատարան և Գերագույն դատարան): Յետևաբար, գործի փաստերի վերաբերյալ որևէ վեճ գոյություն չունեն, և դիմողի պահելաձևն էլ չէր առնչվում դատարանների կարծիքի ձևավորմանը:

Կառավարությունը նաև ուշադրություն է հրավիրել Շվեդական իրավունքում առկա մի կարևոր սկզբունքի վրա, որի համաձայն՝ պաշտոնական փաստաթղթերը մատչելի են ընդհանուրին: Այս սկզբունքի համաձայն, որն ամրագրված է Շվեդական Սահմանադրության մասը կազմող՝ Մամուլի ազատության մասին օրենքում, բոլորն իրավունք ունեն ծանոթանալու շվեդական դատարաններին ներկայացված գրավոր նյութերին (այս սկզբունքը ենթարկվում է միայն սահմանափակ թվով բացառությունների, որոնք նախատեսված են Գաղտնիության մասին օրենքով. այդ բացառություններից ոչ մեկը կապ չունի սույն գործի հետ): Սա նշանակում է, որ դատաքննության կապակցությամբ գոյություն ունի լիարժեք հրապարակայնություն նույնիսկ բանավոր լսումների բացակայության դեպքում և, համապատասխանաբար, չի կարող լինել դատարաններում գտնվող որևէ նյութ, որը մատչելի չլինի ինչպես գործի կողմերին, այնպես էլ հանրությանը: Յստակորեն, դատաքննության այս հրապարակային բնույթը ապահովում է էական երաշխիք ընդդեմ կամայական որոշումների՝ հնարավորություն տալով կողմերին և հասարակությանը հսկողություն իրականացնել արդարադատության պատշաճ իրականացման նկատմամբ: Կառավարությունը պնդում է, որ շվեդական իրավական համակարգի այս առանձնահատկությանը պետք է հատուկ ուշադրություն դարձվի, երբ խոսքը վերաբերում է շվեդական դատարաններում գործի վարույթին՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների տեսանկյունից:

B. Դիմողները

1. Փաստարկները

Սույն գործում բարձրացված տարբեր իրավական և ընթացակարգային հարցերի վերլուծությունը հեշտացնելու համար նպատակահարմար է առանձնացնել երեք տարբեր հարցեր.

ա. զուտ վարչական վարույթը, որը նախաձեռնել էին դիմողները՝ կալվածքը պահելու թույլտվություն ստանալու նպատակով, վարույթ, որն

ավարտվել է դիմողների համար ոչ ձեռնտու՝ Կառավարության 1981թ. և 1983թ. որոշումներով,

բ. վարույթը դատարաններում, որը դիմողները նախաձեռնել են՝ նպատակ ունենալով, որ դատարանը կարգադրի կալվածքի հետ գնումը, վարույթ, որն ավարտվել է դիմողներին ոչ ձեռնտու՝ Գերագույն դատարանի 1983թ. որոշմամբ,

գ. վարույթը դատարանում, որը դիմողները նախաձեռնել էին՝ կալվածքի հարկադիր վաճառքն անվավեր ճանաչելու նպատակով, վարույթ, որն ավարտվել է դիմողների համար ոչ ձեռնտու՝ Գերագույն դատարանի 1985թ. օգոստոսի 20-ի վճռով:

Ըստ դիմողների՝ այս երեք տարբեր հարցերի տարբերակումն ընդունելի է միայն փաստարկման նպատակով: Իրականում, այս երեք վարույթները պետք է դիտվեն որպես ամբողջություն, որոնք դիմողները նախաձեռնել են կալվածքը պաշտպանելու և պահելու նպատակով:

2. Վեց ամսվա կանոնը

Իրավական գործողությունները, որոնցում ընդգրկված են եղել դիմողները, պետք է դիտվեն իրենց ամբողջության մեջ: Ինչ վերաբերում է կալվածքը պահելու թույլտվությունը մերժելու մասին Կառավարության որոշմանը, դիմողները պնդում են, որ իրենք պահպանել են Կոնվենցիայի 26-րդ հոդվածով սահմանված վեց ամսվա կանոնը: Նրանց կարծիքով, սերտ կապ գոյություն ունի սույն գործում տարբեր վարույթների միջև: Նույնիսկ եթե իրենք Գերագույն դատարանի որոշման դեմ զանգատ չեն ներկայացրել Կոնվենցիայի 26-րդ հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետում, նման զանգատը կարող է արդյունավետորեն ներառել և Գերագույն դատարանի 1983թ. հուլիսի 14-ի որոշումը, և Կառավարության 1981թ. փետրվարի 26-ի որոշումը, ինչպես նաև Կառավարության 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշումը: Ըստ դիմողների՝ Կառավարությունը հակասում է իր իսկ՝ 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշմանը: Կառավարությունն իր 1985թ. մարտի 14-ի որոշման մեջ նշել է. «Բողոքը վերջնականապես մերժվել է Կառավարության 1983թ. հոկտեմբերի 27-ի եզրակացությամբ: Բողոքը չի կարող կրկին քննության առնվել Կառավարության կողմից»:

Նույնիսկ եթե Հանձնաժողովը չընդուներ, որ Գերագույն դատարանի 1985թ. օգոստոսի 20-ի որոշման վրա հիմնված զանգատն արդյունավետորեն ներառում է նաև Գերագույն դատարանի 1983թ. հուլիսի 14-ի որոշումը, ինչպես նաև Կառավարության 1981թ. փետրվարի 26-ի և 1983թ. օգոստոսի 27-ի որոշումները, դիմողները գտնում են, որ զանգատը, այնքանով, որքանով այն վերաբերում է Կառավարության 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշմանը, բավարարում է վեց ամսվա կանոնը, քանի որ ներկայացվել է 1984թ. ապրիլի 3-ին:

3. Թիվ 1-ին արձանագրության 1-ին հոդված

Դիմողները գտնում են, որ 1986թ. հունիսի 19-ին հարկադիր աճուրդը հանդիսանում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված սեփականության իրավունքի խախտում:

Կառավարությունն ընդունել է, որ դիմողները զրկվել են իրենց սեփականությունից՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստով՝ հրապարակային աճուրդի արդյունքում:

Դիմողներն անկարող են ընդունելու Կառավարության այն պնդումը, որ այդ միջամտությունն արդարացված է 1-ին հոդվածով: Ըստ դիմողների՝ բացակայում է արդարացի համաչափությունը տվյալ հասարակական շահի և դիմողների հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջև: Ընդհակառակը, հրապարակային վաճառքը կազմակերպվել էր բյուրոկրատական ապարատի կողմից՝ դիմողների վրա, խտրական եղանակով, նախկին և հետագա սեփականատերերի համեմատությամբ, չափազանց մեծ բեռ բարդելու համար: Կառավարությունն իր փաստարկներում «հրապարակային վաճառք» և «աճուրդ» հասկացություններն օգտագործել է խորամանկ ձևով, երբ բացատրում էր, թե ինչպես է կալվածքը դիմողների կողմից հարկադրաբար վաճառվել 1985թ. հունիսի 18-ին: Գինն արդեն որոշված էր եղել վարչական եղանակով՝ Քրոնոբերգի տեղական Գյուղատնտեսական խորհրդի կողմից՝ 172.000 SEK, ինչը չի գանգատարկվել: Բացի տեղական Գյուղատնտեսական խորհրդից ոչ մեկն իրավունք չուներ առաջարկելու նախնական գին, որը, ապահովության նկատառումներով, չորս հավանական գնորդներին մերժել է՝ խնդրո առարկա կալվածքը ձեռք բերելու թույլտվությունը:

Մինչև 1985թ. հունիսի 18-ի հրապարակային վաճառքը, կալվածքը ենթարկվել է երեք գնահատման. առաջինը՝ 1984թ. փետրվարին և մարտին՝ Քրոնոբերգի Անտառտնտեսության ազգային խորհրդի կողմից, մյուսը՝ 1984թ. ապրիլին՝ Քրոնոբերգի հողային ավագ հսկիչի կողմից և երրորդը՝ 1984թ. հոկտեմբերին՝ հատուկ նշանակված գնահատողի կողմից:

Առաջին գնահատումը կատարվել է դիմողների բացակայությամբ, որոնք ունեին ներկա գտնվելու իրավունք, սակայն չէին հրավիրվել: Կալվածքի գինը որոշվել էր 100.000 SEK: Անտառտնտեսության ազգային խորհուրդը 1984թ. մարտի 15-ի իր նամակում Վաքսջոյի հարկադիր կատարման ծառայությանը մատնացույց է արել, որ «ոչինչ ավելի չի կարելի ասել, բացի նրանից, որ երբ կալվածքը մի քանի տարի առաջ վաճառվել է հարկադիր աճուրդում, կային մի քանի հավանական գնորդներ, ովքեր պատրաստ էին առաջարկել 200.000 SEK-ից ավելի: Այդ ժամանակից ի վեր անշարժ գույքի գինը եղել է նույն մակարդակի վրա՝ ներկայիս արժեքով: Այդ կալվածքի վրա անտառային արդյունաբերությունը և, հետևաբար, անտառտնտեսությունը որոշակի անկում է ունեցել: Ելնելով դրանից, և չնայած մի փոքր նվազած հնարավորություններին, անհավատալի չէ, որ կարող են գտնվել հավանական գնորդներ, որոնք պատրաստ կլինեն գնելու ավելի բարձր գնով, քան գնահատված արժեքն է, այն է՝ 100.000 SEK-ը: Այնուամենայնիվ, նվազ հավանական է թվում, որ որևէ մեկը պատրաստ կլինի վճարել 200.000 SEK-ից ավելի»:

Հաջորդ վարչական գնահատումը կատարվել է հողային ավագ տեսուչի կողմից՝ դիմողների բացակայությամբ, որոնք իրավունք ունեին ներկա գտնվելու, բայց երբևէ չէին հրավիրվել: Այս անգամ կալվածքը գնահատվել էր 125.000 SEK՝ չնայած այն հիմնվում էր նախորդ՝ 1984թ. փետրվարի և մարտի գնահատման վրա: Երրորդ և վերջնական վարչական գնահատումը կատարվել է 1984թ. հոկտեմբերին՝ հատուկ նշանակված երկու գնահատողների կողմից՝ դիմողների ներկայությամբ: Այս գնահատումը հիմնվում էր նախորդ երկու գնահատումների վրա, սակայն, այնուամենայնիվ, արժեքը որոշվել է 172.000 SEK, որն այն գինն էր, ինչը պետք է կիրառվեր 1985թ. հունիսի հրապարակային աճուրդում:

Դիմողները երեք գնահատման վերաբերյալ կատարել են երկու ընդհանուր և քննադատական դիտողություն: Առաջին, կալվածքի գտնվելու տեղով պայմանավորված՝ որակը կիսով չափ թերագնահատվել է իրական որակի համեմատությամբ, և երկրորդ, ամբողջովին անտեսվել են այն ծավալուն անտառնտեսության աշխատանքները, ներառյալ՝ 26.000 եղևնիների տնկումը, որոնք դիմողները 1980-83թթ. իրականացրել են կալվածքում, չնայած նրան, որ բոլոր այս տնկիները մինչև 1984թ. գնահատումն արդեն տնկված էին: Այժմ այդ տնկիները չորսից յոթ տարեկան են և շուտով դրանք կհաստանան: Սա նշանակում է, որ կալվածքի սեփականատերը հաջորդ երեքից չորս տարիների ընթացքում պետք է հավաքի 15.000-16.000 երիտասարդ ծառ: Սա կարող է արվել առանց սեփականատիրոջ ամենափոքր իսկ ջանքերի: Նա կարող է այս երիտասարդ ծառերը վաճառել որպես կայուն անտառ՝ յուրաքանչյուր եղևնին առնվազն 20 SEK-ով, քանի որ ամանորյա եղևնիները պետք է հատվեն և տարվեն մեծածախ վաճառողների կողմից: Այս գործարքը երկուսից երեք տարի հետո հողի սեփականատիրոջը կբերի ավելի քան 300.000 SEK շահույթ՝ կախված կալվածքի գտնվելու տեղով պայմանավորված լավ որակից և շատ ինտենսիվ անտառնտեսությունից, ինչպես նաև դիմողների ու նրանց ընտանիքի անդամների մեծ աշխատանքից, որի համար նրանք հատուցում չէին ստացել: Հաշվի առնելով մի քանի տարիների ընթացքում այս բացառիկ բարձր շահույթը և այն փաստը, որ ծառերի մեծանալուց հետո սեփականատերը կունենա պտղաբեր հող՝ որպես անտառանյութ ծառայող լայնատարած և լավ աճած ծառեր, ցնցող ազդեցություն է գործում այն հանգամանքը,

որ Կառավարությունը և Գերագույն դատարանն ստիպել են դիմողներին կալվածքը, որը նրանք 1979թ. գնել են 240.000 SEK-ով, վաճառել 172.000 SEK-ով: 1985թ. հունիսի 18-ի հարկադիր աճուրդի արդյունքում դիմողները գտնում են Կառավարության ներկայացրած հասարակական շահի որոշ այլ հետաքրքիր և բացահայտող գծեր, այն է՝ որ տեղական Գյուղատնտեսական խորհուրդը 1985թ. հունիսի հրապարակային վաճառքում կալվածքը ձեռք բերելու համար թույլտվության վերաբերյալ մերժված չորս դիմումների դեպքում էլ պնդել է կալվածքի՝ իր անիրական արժեքը, և 1985թ. հունիսի հարկադիր վաճառքից հետո տեղական Գյուղատնտեսական խորհուրդը կալվածքը 125.000 SEK-ով վաճառել է երկու եղբայրների՝ MB-ին և TB-ին, որոնք պատրաստվել էին նույն կալվածքը 1979թ. դեկտեմբերի հարկադիր աճուրդում գնել 230.000 SEK-ով:

Տեղական Գյուղատնտեսական խորհրդի կողմից կալվածքի անհեթեթ 86.000 SEK գնահատումը պաշտպանելու միայն մեկ պատճառաբանություն կարող է ներկայացվել: Եթե այդ գնահատումն ընդունվեր որպես մեկնարկային գին, կարող էր թվալ, թե դիմողներին պատշաճորեն փոխհատուցել են՝ խտրական եղանակով նրանց քիչ վճարելու փոխարեն, երբ նրանց թույլատրվել է 1985թ. հունիսի աճուրդում ստանալ 172.000 SEK, և միևնույն ժամանակ կարող է թվալ, թե հետագա գնորդներ MB-ն և TB-ն ստիպված էին կալվածքը գնել բնականոն շուկայական գնով, երբ նրանց տրամադրվել էր սուբսիդիա՝ դիմողների ծախսերի էական մասի հաշվին: Դիմողներն ընդունում են, որ այս ամենը տեղի է ունեցել, այսպես կոչված՝ շվեդական հասարակության շահերից ելնելով: Այնուամենայնիվ, դիմողները պնդում են, որ շվեդական հասարակության շահի հետ կապված փաստարկը առավել խոցելի է: Հողամասերի ձեռքբերման օրենքն ընդունվել է գյուղատնտեսական նոր ուղենիշները և անտառտնտեսության ու տարածքային պլանավորման քաղաքականության խնդիրներն իրականացնելու նպատակով: Այդ օրենքը գործողության մեջ դնելուց անմիջապես հետո այն դարձավ սուր քննադատության թիրախ՝ ոչ միայն քաղաքականության խնդիրների, այլ նաև այդ նպատակներին հասնելու վարչական միջոցների առումով: Գերիշխող շվեդական կարծիքի համաձայն՝ այդ օրենքով սահմանված խնդիրներն արդեն ժամանակավրեպ են և այդ իսկ պատճառով չեն համապատասխանում այն վարչական միջոցներին, որոնց միջոցով Օրենքը շվեդական՝ իշխանությանը օժտված բյուրոկրատիային տալիս է չարաշահումների հնարավորություն: Ելնելով դրանից՝ այն կարծիքի արդարացումը, որ դիմողների և նրանց սեփականության հետ կատարվածն ի շահ հասարակության է, իրականում նշանակում է խիզախում ականապատ դաշտում:

Ամփոփելով փաստերը՝ 1979թ. դեկտեմբերի հարկադիր աճուրդից, որում դիմողները կալվածքը գնել էին 240.000 SEK-ով, նախորդ սեփականատերը հեռացել է 100.000 SEK շահույթով: Կալվածքում չորսամյա ինտենսիվ անտառտնտեսություն վարելուց հետո, ներառյալ՝ 26.000 եղևնիների տնկումը, ինչը 1979թ. դեկտեմբերի հարկադիր աճուրդից մինչև 1985թ. կեսերն ընկած ժամանակահատվածում կրկնապատկել է կալվածքի շուկայական արժեքը, դիմողները հարկադրվել են կալվածքը վարչական իշխանությունների կողմից որոշված գնով՝ 172.000 SEK-ով, վաճառել Քրոնոբերգի տեղական Գյուղատնտեսական խորհրդին, որը, մերժելով կալվածքը ձեռք բերելու վերաբերյալ բոլոր դիմումները, բացառել է բոլոր մյուս գնորդներին, դրանով իսկ դիմողներին զրկելով կալվածքը շուկայական արժեքով ձեռք բերելու հույսերից: Չետագայում տեղական Գյուղատնտեսական խորհուրդը կալվածքը վաճառել է նոր սեփականատերերի՝ բարձր սուբսիդավորված գնով՝ 125.000 SEK-ով:

Դիմողները հրապարակային աճուրդի անմիջական արդյունքում կորցրել են ավելի քան 300.000 SEK: Դիմողները գտնում են, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է: Կառավարության փաստարկները չեն արդարացնում վարչական մարմինների և դատարանների գործողությունները: Այդ գործողությունները հանդիսանում են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի խախտում: Կառավարության կողմից հիշատակված հասարակական շահը չի գերակշռում վիճարկվող խախտումների լրջությամբ:

4. Կոնվենցիայի 6, 13 և 14-րդ հոդվածներ

Կալվածքը պահելու թույլտվության հարցը դիմողների քաղաքացիական իրավունքների վերաբերյալ վեճի որոշում է: Ելնելով նրանից, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է՝ խախտվել է դիմողների՝ դատարան դիմելու իրավունքը:

Կալվածքը հետ գնելու՝ պետության պարտավորության հարցի առնչությամբ դատարան դիմելը փաստացիորեն դիմողների համար պաշտպանության արդյունավետ միջոց չէ, քանի որ պետությանը՝ գույքը հետ գնելու պահանջ ներկայացնելու իրավունքն օրենքը վերապահել է միայն այնպիսի գործարքում որպես վաճառող հանդես եկող կողմին, որը չեղյալ է հայտարարվել վարչական

իշխանությունների կողմից՝ խնդրո առարկա անշարժ գույքը ձեռք բերելու թույլտվության վերաբերյալ գնորդների դիմումները մերժելու միջոցով: Այդ իսկ պատճառով հարկադիր աճուրդում անշարժ գույքի գնորդները՝ որպես խումբ, հայտնվում են ավելի վտանգավոր վիճակում, քան վաճառողները: Ըստ դիմողների՝ այս իրավիճակը վերաբերում է քաղաքացիական իրավունքի և վերջինիս կապակցությամբ վեճին ու դրա կարգավորմանը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, 13 և 14-րդ հոդվածները կիրառելի են: Դիմողները եզրակացնում են, որ տեղի են ունեցել դիմողների՝ նշված հոդվածներով նախատեսված իրավունքների խախտումներ:

Հաջորդ հարցը կապված է սահմանված 172.000 SEK-ի հետ: 1985թ. հունիսի 18-ի հրապարակային աճուրդում այս գնի կիրառումը, երբ կալվածքը հարկադրաբար վաճառվել է, խտրական ձևով չափից ավելի մեծ բեռ է բարդել դիմողների վրա՝ ինչպես բացարձակ առումով, այնպես էլ տեղական բնակիչների հետ համեմատությամբ: Նախկին սեփականատերը կարող էր 1979թ. դեկտեմբերի հարկադիր աճուրդից հեռանալ 100.000 SEK շահույթով, և հետագա սեփականատերերը կալվածքը ձեռք են բերել առավել եկամտաբեր ու բարձր սուբսիդավորված գնով, այն դեպքում, երբ սուբսիդիայի մեծ մասը վճարել են դիմողները:

Դատարանի մերժումը՝ չեղյալ հայտարարելու 1985թ. հունիսի 18-ի հրապարակային աճուրդում կայացած վաճառքը, դիմողներին զրկել է արդյունավետ պաշտպանության միջոցից օգտվելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից արդարացի և հրապարակային քննությունից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

1. Դիմողները պնդել են, որ խախտվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, մասնավորապես այն պատճառով, որ 1979թ. դեկտեմբերի հրապարակային

աճուրդում պետությունը կալվածքն իրենց վաճառել է 240.000 SEK-ով, այնուհետև մերժել է կալվածքը պահելու թույլտվությունը և, վերջին հաշվով, նույն կալվածքը 1985թ. հունիսի հրապարակային աճուրդում գնել է 172.000 SEK-ով:

Կառավարությունը պնդել է, որ դիմողներին կալվածքը պահելու թույլտվություն չտալու որոշման վերաբերյալ գանգատը, ինչպես նաև կալվածքը հետ գնելու ընթացակարգի վերաբերյալ ցանկացած գանգատ պետք է մերժվի Կոնվենցիայի 26-րդ հոդվածով սահմանված վեց ամսվա կանոնը չպահպանելու հիմքով: Որպես այլընտրանք, Կառավարությունը պնդել է, որ հետգնման ընթացակարգի վերաբերյալ գանգատը *ratione materiae* անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ: Բոլոր դեպքերում, Կառավարությունը պնդել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա հիմնված գանգատն ակնհայտորեն անհիմն է:

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում, իր հիմնական շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Հանձնաժողովը գտնում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա հիմնված՝ դիմողների գանգատը կազմում է մեկ ամբողջություն, որը վերաբերում է մի քանի փաստերի և վարույթի փուլերի: Դիմողների կալվածքի հրապարակային վաճառքը, որը վերջնական է դարձել, երբ 1985թ. օգոստոսի 20-ին Գերագույն դատարանը մերժել է ընդունել բողոքը, պետք է դիտվի որպես ելակետ՝ վեցամսյա ժամկետը հաշվելու համար: Գանգատը Հանձնաժողով է ներկայացվել 1984թ. ապրիլի 3-ին և գրանցվել է 1985թ. նոյեմբերի 15-ին:

Հետևաբար, գանգատն այս մասով չի կարող մերժվել Կոնվենցիայի 26-րդ հոդվածով սահմանված վեց ամսվա կանոնը չբավարարելու հիմքով:

Հանձնաժողովը գտնում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա հիմնված՝ դիմողների գանգատը բարձրացնում է փաստի և իրավունքի բարդ հարցեր, որոնք այնքան խրթին են, որ դրանց լուծումը պահանջում է գործի հանգամանքների ըստ էության քննություն: Ուստի գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն չէ և պետք է հայտարարվի ընդունելի. անընդունելիությունը հիմնավորող որևէ այլ հիմք չի հաստատվել:

2. Դիմողները նաև գանգատվել են, որ իրենք զրկված են եղել դատարանում՝ կալվածքը պահելու թույլտվությունը մերժելու վերաբերյալ որոշումները

վերանայելու հնարավորությունից: Սա, ըստ նրանց՝ հանդիսանում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

Կառավարությունը պնդել է, որ այս գանգատը պետք է մերժվի՝ վեց ամսվա կանոնը չբավարարելու հիմքով: Կառավարությունը պնդել է նաև, որ այս գանգատը *ratione materiae* անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ, քանի որ կալվածքը պահելու թույլտվություն չտրամադրելու վերաբերյալ որոշումը չի վերաբերում դիմողների քաղաքացիական իրավունքներին՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով: Եթե Հանձնաժողովը գտնի, որ որոշվել են դիմողների «քաղաքացիական իրավունքները», Կառավարությունն ընդունում է, որ դիմողներն իրենց տրամադրության տակ չեն ունեցել 6-րդ հոդվածի պայմանները բավարարող ընթացակարգ:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք...»:

Ինչ վերաբերում է վեց ամսվա կանոնին, Հանձնաժողովը վկայակոչում է, որ կալվածքը պահելու թույլտվության վերաբերյալ դիմողների առաջին խնդրանքը վերջնականորեն որոշվել է 1981թ. փետրվարի 26-ին՝ Կառավարության կողմից: Նրանց երկրորդ խնդրանքը վերջնականապես որոշվել է 1983թ. հոկտեմբերի 27-ին, իսկ 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշումը վերանայելու՝ Կառավարությանն ուղղված նրանց խնդրանքին պատասխան է տրվել 1985թ. մարտի 14-ին. Կառավարությունը հիմք չի գտել որևէ միջոց ձեռնարկելու համար, քանի որ հարցը վերջնականապես կարգավորվել էր 1983թ. հոկտեմբերի 27-ին:

Հանձնաժողովը գտնում է, որ Կառավարության վերջին՝ 1985թ. մարտի 14-ի որոշումը չի կարող դիտվել որպես ելակետ՝ վեցամսյա ժամկետը հաշվելու համար: Հարցը նրանում է, թե արդյոք կալվածքը պահելու թույլտվության երկրորդ խնդրանքի վերաբերյալ որոշումը կարող է հաշվի առնվել որպես ելակետ, կամ արդյոք այդ վարույթները պետք է դիտվեն որպես պաշտպանության ոչ արդյունավետ միջոց, որոնք չպետք է հաշվի առնվեն: Այս կապակցությամբ Հանձնաժողովը նկատում է, որ առաջին որոշումը չի ունեցել *res judicata* ազդեցություն, և որ վարույթի երկրորդ փուլը վերաբերում է դիմողների խնդրանքի նոր ըստ էության քննությանը՝ չնայած նրան, որ հղումը կատարվել է նախորդ որոշմանը: Հանձնաժողովը նշում է նաև, որ թերևս դիմողներն այն կարծիքին են, որ եղել են վարույթի երկրորդ փուլում քննարկվելիք նոր փաստեր: Ավելին, այն փաստը, որ Գյուղատնտեսության ազգային խորհուրդը վարույթի երկրորդ փուլում զննության է ենթարկել կալվածքը, վկայում է այն մասին, որ ծագել են հետագա քննություն պահանջող հանգամանքներ: Այս մասնավոր հանգամանքներում Հանձնաժողովն ընդունում է, որ Կոնվենցիայի 26-րդ հոդվածի նպատակների համար «վերջնական որոշումը» Կառավարության 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշումն է: Վեցամսյա ժամկետը հաշվելու համար հիմք ընդունելով այս ամսաթիվը՝ հետևում է, որ գանգատը չի կարող մերժվել այդ կանոնը չբավարարելու հիմքով:

Մնացած հարցերը, որոնք կարգավորման անհրաժեշտություն ունեն, հետևյալն են. արդյոք կալվածքը պահելու թույլտվությունը դիմողներին մերժելու մասին որոշումը դիմողների «քաղաքացիական իրավունքների»

«որոշում» էր՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, և եթե՝ այո, արդյոք, դիմողները հնարավորություն ունեին թույլտվության այդ մերժումը ներկայացանել 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները բավարարող ատյանի առջև:

Հանձնաժողովը կողմերի ներկայացարած նյութերի հիման վրա կատարել է այս հարցերի նախնական քննություն: Հանձնաժողովը գտել է, որ այս հարցերն այնպիսի բարդ և խրթին բնույթ ունեն, որ դրանց կարգավորումը պահանջում է ըստ էության քննություն: Ուստի այս գանգատը պետք է ընդունելի հայտարարվի:

3. Այնքանով, որքանով դիմողները գանգատվում են, որ կալվածքը հետ գնելու ընթացակարգը չի բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված պայմանները, Հանձնաժողովը գտնում է, որ այս ընթացակարգն ընդհատվել է 1983թ. հուլիսի 14-ին, երբ Գերագույն դատարանը մերժել է բողոքի ընդունումը: Քանի որ գանգատը ներկայացվել է 1984թ. ապրիլի 3-ին, որն ավելին է, քան վեց ամիսը՝ սկսած նշված որոշումից, հետևում է, որ այս կապկացությամբ գանգատն անընդունելի է՝ համաձայն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 3-րդ կետի:

4. Դիմողները նաև գանգատվում են Գոթայի վերաքննիչ դատարանում բանավոր լսումների բացակայությունից, երբ այդ դատարանը քննության է առել հրապարակային աճուրդի վերաբերյալ բողոքը:

Կառավարությունը պնդել է, որ այս գանգատն ակնհայտորեն անհիմն է:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է քաղաքացիական իրավունքները և պարտականությունները որոշելիս «արդարացի և հրապարակային լսումների» իրավունք:

Հանձնաժողովը գտնում է, որ վերաքննիչ դատարանում գործի վարույթի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության վերաբերյալ հարցը և այն հարցը, թե արդյոք դիմողներն այդ վարույթում իրավունք ունեն լսումների անցկացման, բարձրացնում են այնպիսի կարևոր և բարդ բնույթի հարցեր, որոնց կարգավորումը պահանջում է ըստ էության քննություն: Ուստի այս գանգատը պետք է հայտարարվի ընդունելի:

5. Բացի դրանից, դիմողները գանգատվում են նաև, որ վարույթը Գերագույն դատարանում, երբ վերջինս մերժել է բողոքի ընդունումը, խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ Գերագույն դատարանը լսումներ չի անցկացրել:

Դատավարության օրենսգրքի 54-րդ գլխի 10-րդ բաժնի համաձայն՝ Գերագույն դատարանը կարող է բողոքն ընդունել միայն, եթե դա անհրաժեշտ է նախադեպ ձևավորելու համար կամ եթե կան նման քննության հատուկ պատճառներ, ինչպիսիք են վարույթը նորոգելու հիմքերը, կամ եթե վերաքննիչ դատարանում կատարվել է ակնհայտ սխալ:

Հանձնաժողովի կարծիքով, այն հարցի քննարկումը, թե արդյոք պետք է բողոքը թույլատրվի, իրենից ներկայացնում է միայն այն հարցի քննարկում, թե արդյոք բավարարված են Դատավարության օրենսգրքի 54-րդ գլխի 10-րդ բաժնի պայմանները, և ոչ թե բողոքի ըստ էության քննարկում: Հանձնաժողովը հղում է կատարում իր նախկին նախադեպային իրավունքին, որի համաձայն՝ Շվեդիայի Գերագույն դատարանի կողմից բողոքը թույլատրելու հարցի քննարկումը չի ներառում «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» որոշումը (թիվ 11453/85, Որոշում 7.7.86):

Սրանից հետևում է, որ այս գանգատն անհամատեղելի է *ratione materie* Կոնվենցիայի դրույթների հետ և պետք է մերժվի 27-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

6. Դիմողները նաև գանգատվել են Կոնվենցիայի 13 և 14-րդ հոդվածների կապակցությամբ: Այս գանգատները սերտորեն կապված են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա ներկայացված գանգատների հետ, որոնք Հանձնաժողովը հայտարարել է ընդունելի: Համապատասխանաբար, այս գանգատները պետք է հայտարարվեն ընդունելի:

Սյս հիմքերով Հանձնաժողովը՝

Անընդունելի է հայտարարում

1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա հիմնված գանգատը, որը վերաբերում է հետզնման ընթացակարգին,

2. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա հիմնված գանգատը՝ կապված Գերագույն դատարանում հրապարակային լսումների բացակայության հետ, երբ որոշվել է հրապարակային աճուրդի վերաբերյալ վարույթների դեմ բողոքի ընդունման հարցը,

Գանգատի մնացած մասը հայտարարում է ընդունելի՝

առանց կանխորոշելու ըստ էության քննությունը:

Հանձնաժողովի քարտուղար

Հանձնաժողովի նախագահ